Պարգեւ Սրբազանը Նյու Յորքում

«Արցախին պետք է տալ ինքնավար հանրապետության հանգամանք»

Վերջերս Մ. Նահանգներում էր գտնվում Արցախի թեմի հոգեւոր առաջնորդ Պարգեւ եպս. Մարտիրոսյանը, որ հանդիպումներ ունեցավ ամերիկահայ գաղութի, թերթերի խմբագրությունների եւ տեղական ու համայնքային պաշտոնյաների հետ: Նյու Յորքում գտնվելու օրերին, Պարգեւ Սրբազանի հետ հետեւյալ կարճ հարցազրույցն էր ունեցել մեր աշխատակիցը:

Հ.– Հայաստանի կառավարութիւնը ի՞նչ միջոցներով այսօր օգտակար կ՚ըլլայ արցախահայութեան:

Պ.– Տնտեսապէս, բարոյապէս եւ ճկուն ու իմաստուն քաղաքականութեամբ:

Հ.– Արցախի հայութիւնը, իր կարգին, որքանո՞վ օգտակար կը դառնայ մարզին շրջակայ հայաբնակ գիւղերուն:

Պ.– Արցախից դուրս մնացել է Շահումեանի շրջանը, որի գիւղերի բնակչութիւնը կազմում է մօտ 16–17 հազար հայութիւն: Շահումեանի շրջանին Արցախը օժանդակ է լինում տնտեսապէս, բարոյապէս եւ իր կարելի միջոցներով:

Հ.– Ի՞նչ վիճակ կը ներկայացնեն Մարտունաշէնէն, Գետաշէնէն եկող գաղթականները:

Պ.– Գետաշէնի եւ Մարտունաշէնի բնակչութիւնը այսօր գտնւում է Հայաստանում եւ դեռ գտնւում են հիւրանոցներում եւ հանգստեան տներում, մինչեւ նոր տնօրինութիւն:

Հ.– Խորհրդային իշխանութիւնները ի՞նչ օգտակարութիւն կ՚ունենան այդ գաղթականներուն:

Պ.– Իմ իմացած տուեալներով՝ ոչ մի օգնութիւն:

Հ.– Որքա՞ն հայութիւն մնացած է այսօր երբեմնի Ադրբեջանի (Բաքուի) մեծ գաղութէն:

Պ.– Ստոյգ տեղեկութիւն չունեմ եւ կը կարծեմ թէ այսօրուայ վիճակում անտրամաբանական է եւ անհնարին է որեւէ հայի մնալը Բաքւում:

Հ.– Արցախին տնտեսապէս ո՞վ զօրավիգ կը կանգնի:

Պ.– Միայն ու միայն Հայաստանը եւ մարդասիրական առումով երբեմն որեւէ բարեգործական կազմակերպութիւն:

Հ.– Մայրագոյն պարագային, երբ ամէն յոյս կտրուի Հայաստանին կցուելու, ուրիշ ի՞նչ հեռանկարներ ունի Ղարաբաղի ինքնավար մարզը:

Պ.– Եթէ չմիացուի Արցախը Հայաստանին, ինքնավար մարզին տալ ինքնավար հանրապետութեան հանգամանք, առայժմ Ադրբեջանի կազմի մէջ:

Հ.– Ս. Էջմիածինը բարոյապէս որքանո՞վ օգտակար կը դառնայ ձեզի:

Պ.– Բարոյապէս Ս. Էջմիածինը ամէն ինչով մեզ սատար է, քանզի այն Աստուծոյ ներկայութեան յաղթական խտացումն ու կենտրոնն է ողջ հայութեան համար: Արցախի հայութիւնը ենթակայ է Ն. Ս. Օծութիւն Վազգէն Ա. Կաթողիկոսի մշտական ուշադրութեան ու հոգատարութեանը: Նորին Սրբութիւնը հայրապետական իր ձայնը բարձրացնում է որեւէ բարդ կացութիւնների կապակցութեամբ, մինչեւ վերին մարմինները:

Հ.– Սփիւռքահայութիւնը կրնա՞յ ձեռք երկարել ձեր կարիքներուն:

Պ.– Սփիւռքահայութիւնը կարող է օգտակար լինել Արցախին իր աղօթքներով ու բարոյապէս: Կարող է հնարաւորին դէպքում օգտակար լինել տնտեսական որոշ հարցերում, փորձելով համատեղ ձեռնարկներ ստեղծել, փոխադարձ փոքր-ինչ առեւտրական կապեր հաստատել եւ ամենակարեւորը՝ իր ցոյցերով, բողոքով եւ հնարաւոր դէպքում արտասահմանի մամուլը օգտագործելով՝ ազդել դրանով իսկ հասարակական կարծիքի վրայ:

Յակոբ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ